ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «07-ը» մայիսի 2018թ.
ժամը 11[20]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 *ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած երկու մասնակիցներն էլ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի (Ջրցան մեքենա) մասով ներկայացված թիվ 6.1 հավելվածում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես,
- ըստ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ Ջրցան մեքենան պետք է լինի «Կամազ» մակնիշի, Ձեր կողմից առաջարկվել է «Մազ» մեքենա,
- ըստ հրավերի՝ բաքի տարողությունը պետք է լինի 7 խ.մ, Ձեր կողմից առաջարկված մեքենայի բաքի տարողությունը 6.5 խ.մ. է,
- առաջարկված տեխնիկական բնութագրում նշված չէ շարժիչի հզորությունը (ներկայացված մոդելի հզորությունը ցածր է հրավերով պահանջված չափից),
- ըստ հրավերի՝ մեքենայի լրիվ կշիռը չպետք է պակաս լինի 15000կգ-ին, այնինչ առաջարկվող մեքենայի լրիվ կշիռը 12500 կգ է,
- «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի 2-րդ չափաբաժնի (Տրակտոր (Բելառուս 82.1) մասով ներկայացված թիվ 6.1 հավելվածում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, ըստ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ հետևի ՊԱՄ (задный ВОМ)-ը պետք է լինի անկախ երկարագային հիդրավլիկ սիստեմի կարգավորումով, անկախ I ոչ պակաս 570 պտ/ր, սակայն Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է հետևի ՊԱՄ (задный ВОМ)՝ անկախ երկարագային հիդրավլիկ սիստեմի կարգավորումով, անկախ I 540 պտ/ր, այսինքն ավելի պակաս է, քան հրավերով պահանջվում է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. մայիսի 14-ին, ժամը 15^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

07.05.18թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «14-ը» մայիսի 2018թ.
ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «Սպեցմաշ» և «Գալոպեր» ՍՊԸ-ների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Սպեցմաշ» և «Գալոպեր» ՍՊԸ-ների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Քննարկելով «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից՝ անհամապատասխանությունների շտկմանն ի պատասխան ներկայացված գրությունը՝ գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել, միաժամանակ մասնակցի կողմից որպես ջրցան մեքենային հզորություն նշվել է 156.4 ձիաուժ, այնինչ ըստ հրավերի՝ հզորությունը պետք է լինի ոչ պակաս 179 ձիաուժ: Հիմք ընդունելով նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Գալոպեր» ՍՊԸ-ի հայտը և ընթացակարգի հրավերի 8.16 կետի պահանջների համաձայն մասնակցի տվյալներն ուղարկել լիազորված մարմին:

1.3 «Գալոպեր» ՍՊԸ-ի մերժման արդյունքում ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ-ն:

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և «ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ-ին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Ֆինանսական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

14.05.18թ